ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE34-F846-4D50-B52D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

ԵԴ2/10508/02/24 ք. Երևան
«27» նոյեմբերի 2025թ.

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ2/10508/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի՝ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 12.11.2024թ.-ին կայացված թիվ ՍԱ-631 որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

06.12.2025 թվականին էլեկտրոնային դատավարություն համակարգի միջոցով «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, մակագրվել է դատավոր Ա. Սաֆարյանին:

Դատավոր Ա. Սաֆարյանը 12.06.2024 թվականին կայացրել է որոշում՝

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Բարձրագույն դատական խորհրդի՝ 10.11.2025 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-145 որոշման հիման վրա դատավոր Ա. Սաֆարյանի լիազորությունները իր հրաժարականի հիմքով դադարեցվելու պայմաններում, ներկայացված զեկուցագրի հիման վրա թիվ ԵԴ2/10508/02/25 քաղաքացիական գործը 24.11.2025 թվականին մակագրվել է դատավոր Մ. Հարությունյանին:

(I) Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/10508/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի՝ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 12.11.2024թ.-ին կայացված թիվ ՍԱ-631 որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի դեկտեմբերի 26-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Մալվինա Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN MALVINA

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am